

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝

Հ. ԹԱՎԱԴՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՏԱՆ ՏՂԱՍԱՐԴԿԱՆՑ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Մրցաշարը կանցկացվի 2021թ. դեկտեմբերի 15-ից 23-ը, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մասնակցում են 2201 և ավելի ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող, ինչպես նաև 1/2 եզրափակիչից իրավունք ստացած շախմատիստները:

Ժամակարգը՝ 90-ական րոպե յուրաքանչյուր մասնակցին մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ

ա/ հակառակորդների հատված միջին վարկանիշի /հաշվի չի առնվում ամենացածր վարկանիշով մրցակցի հետ հանդիպումը/,

բ/ սև գույնով խաղացած պարտիաների քանակի:

Միջազգային վարկանիշների հաշվարկման համար մրցաշարի արդյունքները կուղարկվեն ՖԻԴԵ:

Խաղասկզբի համար սահմանված ժամից 15 րոպեից ավելի ուշացած խաղացողը պարտվում է:

ՄՐՑԱՆԱԿԱՑԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

1-ին տեղ	2-րդ տեղ	3- րդ տեղ	4- րդ տեղ	5- րդ տեղ
150 000 ՀՀ դրամ	100 000 ՀՀ դրամ	50 000 ՀՀ դրամ	30 000 ՀՀ դրամ	20 000 ՀՀ դրամ

Հատուկ մրցանակներ

կանանց համար	Մինչև 16տ.	Վետերանների 60...
15 000 ՀՀ դրամ	15 000 ՀՀ դրամ	10 000 ՀՀ դրամ

Համաձայն ՀՀ Հարկային օրենսգրքի մրցանակային հիմնադրամի եկամտային հարկի պահումները կկազմի մինչև 22%:

Մրցանակները չեն կիսվում:

ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ՀՄՎ Աշխարհի, Եվրոպայի մրցանակակիրներ	անվճար
2201.....	2 000 ՀՀ դրամ
2151-2200	10 000 ՀՀ դրամ
2101-2150	15 000 ՀՀ դրամ
... -2100	20 000 ՀՀ դրամ

Ցուցակագրումը մինչև դեկտեմբերի 13-ը ժամը` 15.00-ն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Մրցաշարի մասնակիցները պետք է գրանցվեն նախապես` կատարելով մուտքավճարի փոխանցում հետևյալ բանկային հաշվին`

**Հայաստանի շախմատի ֆեդերացիա հ/կ
Ք. Երևան Խանջյան 50
“ԱՐԱՐԱՏ” Բանկ ԲԲԸ
ՀՀ 1510002020290100**

**Նպատակը դաշտում նշել` Տ. Պետրոսյանի անվ. շախմատի տան եզրափակիչ
մրցաշար, անուն, հայրանուն, ազգանուն, հեռախոսահամար**

Հեռ. 55-46-47

Խաղացանկ

- 15 դեկտեմբերի – 1-ին տուր 16:00
- 16 դեկտեմբերի – 2-րդ տուր 16:00
- 17 դեկտեմբերի – 3-րդ տուր 16:00
- 18 դեկտեմբերի – 4-րդ տուր 16:00
- 19 դեկտեմբերի – 5-րդ տուր 16:00
- 20 դեկտեմբերի – 6-րդ տուր 16:00
- 21 դեկտեմբերի – 7-րդ տուր 16:00
- 22 դեկտեմբերի – 8-րդ տուր 16:00
- 23 դեկտեմբերի – 9-րդ տուր 16:00

Գլխավոր մրցավար